

## ԲԱԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բազե<sup>1</sup>:

Այս ազնիւ թուշունը շատ կտրիչ ու եռանդուն է կռուոյ մէջ. և թէ որ արծոյ պէս քաջութեանը հետ զօրութիւն ալ ունենար, անոր հետ կրնար բաղդատուիլ. բայց ինքը հաւեէն աւելի չմեծնար: Խրկայնութիւնը 15էն ինչուան տասնուինը բժաշափ կը համնի. տեսքը սիրուն ու վայելուզ. կւնըկին փետուրները մթնագոյն, և փորուն երկու կողերը ձերմակի վրայ մութ ըլլալով, աղուոր տեսք մը կուտան իրեն: Խիստ որսասէր թուշուն մըն է, և միանգամայն գիշատիչ: Ա երին ծամելիքը, որ գէպ ՚ի առջել ծռած է աղեղնածե ու սրածայր է. նաև վարի ծամելիքը քիչ մը կոր ու սրակուց է. աս սուր ու կըտրուկ կտուցովը չարաչար կը վիրաւորէ իր որսը և ուժով մը կը խածնէ: Յաւերը՝ բացած ժամանակը իրեք ոտք ու կէս տարածութիւն ունին, խկ գոցած ատենը զրեթէ ինչուան պոշին ծայրը կը համնին, փետուրները նօսր ու զրեթէ շիտակ են, և շարժմանը մէջ զարմանալի ուժ ձարպը կութիւն և արագութիւն մը կը տեսնուի: Այսնկ ըլլալով բազէները հովի գէմ թուշիլ կը սիրեն, և երբոր օդուն բարձերը ելելու ըլլան՝ կը զուարձանան, զանազան ձեւրով կը թութիւններ ու փորձեր կ'ընեն, բոլորակածե շրջաններ կը կտրեն, քարի պէս իրենք զիրենք վար կը ձգեն ու նետի պէս վեր կ'ելլէն, այնպիսի զարմանալի վարպետութեամբ մը որ մարդս շուարած կը մնայ. բայց իրենց սուր աշքը բոլոր ասխաղերուս ժամանակը միակերպ իրենց մէ վար եղած դարտափոս տեղուանքը կը դիաէ: Բազէին ձանկերը զօրաւոր զէնքի տեղ կը ծառայեն. չոր ու ջղային,

երկայն կոր ու սուր են՝ մանգաղի երկաթին նման. խիստ քիչ անգամ կ'ըլլայ որ ասոր ձանկերէն որաը փախչի, լճքին կարգէ դուրս սրութիւնն ալիրէն որսական գործիքներէն մէկն է:

Ճնութեամբ կռուասէր ըլլալուն, շարունակ բոլոր մէկալ թուշոց հետ կը կռուըտի, և նաև իրմէ մեծ թուշոց հետ. և թէ որ իր բնական անվախութիւնը կրթուի՝ իրմէ շատ մեծ կենդանեաց հետ ալ կը պատերազմի: Ոչ երբէք կը կշտանայ ուրիշի բռնած որսէն, ինչուան որ գոնէ ուրիշ որսորդէ մըյափշտակած չըլլայ. խկ իրեն բռնած որ սին մանաւանդ թէ յաղթութեր վրայ շատ կ'ուրախանայ: Կը որսը ուտելուժամանակը թէ որ կաքաւ մը, ուրուր մը և կամուրիշ թշնամի մը տեսնելու ըլլայ՝ կը թողու իր առջեւի որաը ու աննց վրայ կը յարձեկի, ուրիշ գիշատիչ թուշոց պէս խարդախութեամբ չյարձրկիր թշնամոյն վրայ, հապա ազատ համարձակ դիմացը կ'ելլէ. որ շուտ, յանկարձական ու կայծակի պէս սաստիկ ըլլալուն՝ գէմ չեն կրնար զնել: Բազէն կրակի պէս ամպերէն վար կ'իջնայ և ուղիղ գծով ալ վեր կ'ելլէ նորէն, ու իրեն հետ իր բռնած որսն ալ կը տանի, թէ որ նոյն տեղը մէկէն չափէ. վասն զի ուրիշ գիշատիչ թուշոց պէս որսալէն եաքը չերթար չպահուըտիր. և թէպէտ արծուի ալ պատահի՝ որ աւելի ուժով է իրմէ, իր որսը գիւրաւ չթողուր. բայց իր կտրձութեամբը չկրնալով անոր պէս բռնաւոր թուշոց մը հետ կռուիլ, իր արագ թեւերուն վատահացած իր որսովը կը թուժ կ'երթայ: Տեսնելու բան է արծույթ բազէին բանեցուցած հնարքները իր որսը արծուոյն ձեռքէն պաշտպանելու համար. կ'ելլէ ամպերուն մէջ կը կարսուի, կ'իջնայ նորէն գետինը կը փորէ, ասդիս անդին կը պտըտի, ձարտարութիւններ կը բանեցընէ, խաչաձեւ կը թուշտի, յանկարձ կը կենայ, շուտ մը իր լնթացքին ուղղութիւնը կը փոխէ. բայց շատ անգամիր փորձերը անօգուտ կ'ըլլան իր թշնամոյն աչաւոր զօրութեա-

<sup>1</sup> 1. Falco. գլ. Faucon. ՏՀ. Տաշա, շահի:



## Բագէ:

Նը դէմ, ուստի չկրնալով բան մը ընել,  
կը ձգէ իր որսը ցաւով ու կրքով։

Իրեն կերակուր որսալու կերպն ալ  
կը ցուցընէ թէ որչափ խելացի ու կը տ-  
րիժէ : Ոյէ որ տեսնէ արագած և թը ը-  
շուն մը՝ չնայիր որ իր ճանկերովը բռնէ  
զան, հապա անցնելու ատեն կամ կուրծ-  
քովը և կամ թե երովը կը դալի անոր,  
որպէս զի շփոթեցընէ ու տկարացընէ .  
իսկ թէ որ խեղձ թռչուն մը ըլլայ՝ ա-  
նոր ետևէն կ'ի յնայ առանց զարնելու՝  
ինչուան որ բռնէ : Այթէ տեսնէ որ իր  
թշնամին զօրաւոր է, ինքընքը պաշտ-

պանելու համար շատ զգուշութիւններ  
կ'ընէ, ու դիմացը ելելէն առաջ լաւ մը  
կը յոկնեցընէ զանիկայ ու կոռուց ատեն  
առջի զարնուածքին մէկէն կը մեռցընէ :

Որովհետեւ ընդարձակ տեղ կը սիրէ,  
անոր համար լեռնոտ երկիրներու, ու  
սեպացեալ ժայռերու վրայ կը դնէ բոյ-  
նը : Շնութեամբ վայրենի ու դաժան  
ըլլալով՝ մայրական խնամք քիչ ունի . իր  
հաւկիթները ժայռի մը վրայ մանր ճիւ-  
ղերու մէջ կ'ածէ ու հոն կը հանէ իր  
ձագերը . միայն կը նայի որ բայնը հարա-  
ւային կողմը ըլլայ, որպէս զի արեւուն

Ճառագայթները թուխսի դրած հաւ-  
կիթները տաքցընեն : Դագերը երբոր  
բաւական զօրութիւն կ'ունենան իրենց  
ուտելիքը ճարելու , արուն և էգը իրենց  
բնակած տեղերէն կը քշէն կը վորնտեն  
զանոնք , և ուրիշ տեղ կը զրկեն որսա-  
լու . վասն զի բազէն՝ ինչպէս նաև գի-  
շատիներուն մեծ մասը , մասնաւոր  
սահման կ'որոշէ իրեն համար , ուր տեղ  
կը փակուի կը մնայ , և ուրիշ որ և իցէ  
յափշտակիչ թռչնոց մեծ վրէժինդրու-  
թիւն կ'ընէ՝ երբոր իր սահմանը ոտք  
կոխեն՝ թէ և իր ցեղէն ըլլան :

Դագէն շատ տեսակ ունի . աս ըսած-  
ներս աւելի լանէկ ըսուածին վրայ իմա-  
նալու է , բայց անոնց մեծ մասին վրայ  
ալ կրնայ իմացուիլ : Ի սոնց ձեւը , մեծու-  
թիւնը , փետուրները շատ տեսակ կ'ըլ-  
լան . և իրենց զանազան որսորդութենէն  
այլ և այլ բարք կ'ունենան . ինչպէս մէկը  
ձկնակեր է , մէկալը խղունձ կ'ուտէ , ու-  
րիշ մը միայն որդ կ'ուտէ , ուրիշ մըն ալ  
միայն դաշտի մկներով կ'ապրի և այն .  
( ) ձակեր բազէին վրայ Բազմավիպիս  
մէջ ուրիշ անգամ խօսեր ենք ' , պատ-  
կերն ալ մէկտեղ դնելով :

Ի մէն երկրի մէջ աս բազէները ե-  
րեւելի եղած են որսորդութեան մէջ ,  
ուստի մարդիկ ալ զուարձութեան հա-  
մար զիրենք որսի բանեցուցած են : Հի-  
ներն ալ գիտէին աս արուեստը . ինչպէս  
որ մեր հին պատմութեանց մէջ ալ կը  
յիշուին բազէով որսորդութիւններ , ո-  
րուն համար մասնաւոր աւագ պաշտօ-  
նեայք ալ կային որ բազէակալու բազէակիր  
կ'ըսուեին : Լալուածապետութե դարե-  
րուն մէջ շատ անուանի էր Լարոպայի  
մէջ բազէով որսորդութիւններ . և աս  
տեսակ որսորդութեան իրաւունքը ազ-  
նուականի մը մեծ պատիւ կը սեպուէր :  
Ո ասնաւորապէս Լալանտայի Ճերմակ  
բազէները շատ յարգի էին ու զանոնք  
սպաննելը ' յանեաց մէջ քրէական յան-  
ցանք կը համարուէր : Լարոպայի այլ և  
այլ կողմերը հիմա ալ գեռ կը պահեն աս  
կենդանին . բայց Ի ֆրիկէ , մանաւանդ

Ի սիոյ մէջ աւելի յարգ ունին , ու ին-  
չուան հիմա այլ և այլ որսորդութեանց  
մէջ կը բանեցընեն :

ՀԱՄԱՐՈՍ ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ :

Թ.

ԴԱՍ ԱՌ Ա. Ֆ. Ի.

Հրային ժայռեր :

( ըարունակութիւն )

Գ. Հրաբխեան ժայռ ըսելով կ'իմա  
նանք հինգերորդ դարէն սկսեալ ին-  
չուան հիմա հրաբուխներէ ելած նիւ-  
թերով ձեւացած կարգերը , որ լսա կ'ը-  
սուին . աս նիւթը թեթե է ու շատ  
անգամ ապակի դարձած ու ծակծկած  
կ'ըլլայ , ընդարձակ երկիրներ չըռներ ,  
շատ անգամ ալ խստաքարի ու պազալ-  
թի հետ խառնուած կ'ըլլայ . իրենց  
դիրքը ընդհանրապէս լեռներուն կողե-  
րուն վրայ կ'իյնայ , և որչափ որ ստորո-  
տը համնի՝ կ'ընդարձակի , իսկ լեռնե-  
րուն գագաթը մեծամեծ բոլորաձեւ բա-  
ժակներ կը ձեւանայ :

Հրաբխեան նիւթերուն կարգը դը-  
նելու է նաև անոնցմէ ելած ջրերը , կա-  
զը , ձիւթի կուպրի աղբիւրները ու  
հանգային ջերմուկները և ածիւային կա-  
զերը , որոնք բոլորն ալ երկրիս ներսէն  
դուրս կը պութկան հրաբուխներուն  
բոլնկելու ատենը . ինչպէս նաև երկա-  
թի , ծծումքի , կրի ծծմքուտի , գայ-  
լախազի , արիւնաքարի ու յասպիսի կոյ-  
տերը , հրաբխի մոխիրը ու Քաղցրացն  
ըսուած կարմիր հողերը :

Հրաբխեան ժայռերը կը գտուին Ի ր  
բարատ լեռան ստորոտը Բամփանիայի  
մէջ Ո եսուպի բոլորը , Փրանսա՝ ( )-  
վերներ գաւառը , Լալանտա , Ժակնէ-  
րիֆֆա , Լ անսրոթ , Ի սոր , Պուրպոն ,  
Ո լուքեան , Փիլիպեան ու Ի լէու-  
թեան կղզիները , Բորտիլեան լեռնե-  
րուն , Վիլիի , Վուիթոյի ու Ո եքսի-